Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1659 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2010-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՑՈՐԵՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՄՆԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի ապահովման նպատակային հաշվի սպասարկման կարգը:

2. <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը բանկում բացում է նպատակային հաշիվ:

3. Նպատակային հաշվին կուտակված ֆինանսական միջոցների տնօրինման իրավունքը վերապահել <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը նպատակային հաշվի ֆինանսական միջոցների օգտագործման համար հաշվետու է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին: Հաշվետվությունը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ներկայացվում է մինչև հաջորդ ամսվա 10-ը:

5. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը նպատակային հաշվի օգտագործման մասին եռամսյակը մեկ, մինչև հաջորդ ամսվա 20-ը, հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

6. Նպատակային միջոցների ծախսման ուղղությունները և չափաքանակները <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը կիսամյակային կտրվածքով

նախապես համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ։ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը եռօրյա ժամկետում համաձայնեցման արդյունքների մասին իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին՝ կից ներկայացնելով նաև համաձայնեցված տարբերակը։

7. Նպատակային հաշվին կուտակված ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել՝

1) սերմնաբուծության զարգացման նպատակով արտերկրից ներկրվող կամ տեղական սերմնարտադրողներից ձեռք բերվող սուպերէլիտային, էլիտային և առաջին վերարտադրության սերմացուների գնման համար.

2) <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության և հանրապետությունում սերմնաբուծությամբ զբաղվող պետական այլ կազմակերպու-թյունների կարողությունների հզորացման նպատակով գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու և արտոնյալ պայմաններով վերջիններիս հատկացնելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ